

9

111

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ընդունած Բ. համագումարում 1919 թի
7—15 սեպտեմբերի

ԵՐԵՎԱՆ, տպարան «ԼՈՅՍ»

10 JUL 2017 91

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԾՐԱԳԻՐԸ

ընդունում երկրորդ համապումարում 1919 թի
7—15 սեպտեմբերի, երեսնում

Ա.

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

I

Ընդունելով ազգը և նրա մշակույթը որպէս
սոցիալ-քաղաքական և կուլտուրական առաջնա-
կարգ գործօն և համարելով նրանց զարգացումը
համապատասխան պատմական պրոցեսին, քաղա-
քակրթութեան պահանջներին և անհատականու-
թեան ձգտումներին՝ Հայ Ժողովրդական կուսակ-
ցութիւնը իր զլխաւոր նպատակն է համարում
պաշտպանել բովանդակ Հայ Ժողովրդի իրաւուն
քները և ծառայել նրա ազգային մշակույթի ու
պետականութեան զարգացման:

II

Ինկատի ունենալով հասարակութեան և ան-
հատի ներգաշնակ զարգացման անհրաժեշտու-

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ
ԴՊԱՐՏԱՐԱՆ

1-238490

1/5

թիւնը և դեկավարելով ժողովրդապետութեան սկզբունքով-Հայ ժողովրդական կուսակցութիւնը ձգտում է հաստատել Հայաստանում իրաւական և պարլամենտական կարգեր:

III

Համարելով կապիտալիզմը մարդկութեան պատմական զարգացման ընթացքում անհրաժեշտ և անխուսափելի մի զարաշրջան և ընդունելով, որ նա մասնաւորապէս Հայաստանում դեռ սաղմային դրութեան մէջ է գտնուում և ունի կատարելու խոշոր շինարարական դեր՝ Հայ ժողովրդական կուսակցութիւնը նպատակ ունի է Հայաստանում կապիտալի հաստատման և ներքա զարգացման յօգուտ հայ ժողովրդի և հայ պետութեան բարգաւաճման, իսկ սոցիալական բարդ պրոբլեմի արդար լուծման նպատակով Հայ ժողովրդական կուսակցութիւնը, չը համարելով դասակարգային հակամարտութիւնները որպէս վնասեղան միջոց սոցիալական խնդիրների լուծման համար և չը յենւելով առանձնապէս և ոչ մի դասակարգային շերտաւորման վրայ, ձգտելու է սոցիալական լայն բարեփոխութիւնների միջոցով աստիճանաբար վերացնել մարդ անհատի շահագործումը միւսի կողմից:

IV

Համարելով Եվրոպացիան (ընաշրջումը) որպէս բնութեան և մարդկային հասարակութեան զարգացման անյողդողդ օրէնք՝ Հայ ժողովրդական կուսակցութիւնը իր բոլոր պահանջները իրագործելու է աստիճանաբար, իրաւական պարլամենտական ճանապարհով, հետեւելով բնալքադաքականութեան:

Բ.

Մ Բ Ե Գ Ի Բ

I.

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ

1. Հայ ժողովրդական կուսակցութեան նըպատակն է Հայաստանի անջատւած մասերից ստեղծել Միացեալ և Մենախի Հայաստան իր սեփական ծովային ելքով:

2. Հայաստանի սահմաններից դուրս՝ այլ երկրներում ապրող հայերի համար Հայ ժողովրդական կուսակցութիւնը ձգտում է ձեռք բերել ազգային կուլտուրական աւտոնոմիա, հասարակական-իրաւական միութիւնների իրաւունքներով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ա.

Պետական կազմը

1. Հայաստանը պէտք է լինի դեմոկրատական պարլամենտական հանրապետութիւն. օրէնսդրական իշխանութիւնը պատկանելու է ժողովրդական ներկայացուցչութեան՝ պարլամենտին: Գործադիր իշխանութեան գլուխ կանգնած պէտք է լինի հանրապետութեան նախագահը, որը ընտրւած կը լինի որոշ ժամանակով պարլամենտի կողմից և կը կառավարէ մինիստրական խորհրդի միջոցով, որը պատասխանատու է պարլամենտի առաջ:

2. Պարլամենտի անդամները ընտրւում են ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութեամբ, առանց դաւանանքի, ազգի և սեռի խտրութեան, համեմատական սկզբունքով:

3. Պարլամենտը մասնակցում է օրէնսդրական իշխանութիւնը իրագործելու, պետութեան երևուողը սահմանելու մէջ և վերահսկում է բարձր ու ստորին ադմինիստրացիայի գործողութիւնների օրինականութեան և նպատակաշարժարութեան վրայ:

4. Պետական երևուողը սահմանւում է օրէնսդրական կարգով ոչ աւել, քան մի տարի

ժամանակով: Ոչ մի տեսակ հարկ կամ տուրք յօգուտ պետութեան, նոյնպէս և պետական փոխառութիւնները չեն կարող սահմանել այլապէս՝ քան օրէնսդրական ճանապարհով:

5. Ոչ մի որոշում, կարգադրութիւն, հրաման, ինչ անուն էլ որ կրէ և ունից էլ որ բղխէ՝ չէ կարող օրէնքի՝ ոյժ ստանալ, եթէ հիմնւած չէ պարլամենտի որոշման վրայ:

6. Պարլամենտի անդամները իրաւունք ունին օրէնսդրական նախաձեռնութեան և հարցապնդումի:

բ.

Քաղաքացիների իրաւունքները

1. Հայաստանի բոլոր քաղաքացիները առանց սեռի, կրօնի և ազգի խտրութեան հաւասար են օրէնքի առաջ:

2. Ամեն մի քաղաքացի վայելում է խղճի ու դաւանանքի ազատութիւն: Չի թոյլատրւում որեւէ հալածանք դաւանանքի կամ համոզմունքի, դաւանանքը փոխելու կամ նրանից հրաժարուելու պատճառով:

3. Ամեն ոք ազատ է կատարել իր կրօնական և աստվածապաշտական արարողութիւնները և քարոզել իր դաւանանքը, եթէ միայն սրանք չեն պարտաւորւում ահապսի գործողու

թիւներ, որոնք պատժելի են քրէական օրէնս-
դրութեամբ:

4. Ոչ մի եկեղեցի կամ դաւանութիւն
պետութեան մէջ չէ պէտք է վաշխէ առանձին
ազատութիւն:

5. Եկեղեցին անշատ է պետութիւնից:

6. Ամեն ոք ազատ է արտայայտել
իր մտքերը բանաւոր կամ գրաւոր և հրատա-
րակել նրանք մամուլի կամ այլ միջոցով: Գրա-
քնութիւնը, ընդհանուր կամ յատուկ, ինչ ան-
ւան տակ էլ որ լինի, վերացում է և չէ կա-
րող վերանորոգել: Բանաւոր կամ տպագրական
խօսքի միջոցով կատարուած յանցանքների կամ
օրինազանցութիւնների համար յանցաւորները
պատասխանատու են միայն դատարանի առաջ:

7. Բոլոր քաղաքացիներին իրաւունք է
տրուում կազմակերպել հրապարակային մո-
ղովներ բացօդեայ կամ փակ շինութիւնների
մէջ՝ ամեն տեսակ հարցեր քննելու համար:

8. Բաղադրւածներն իրաւունք ունեն
ունեն Թաւրիւններ և քննութիւններ, առանց
որ ծաղիկ Բայրաւոր խնդրելու՝ միայն
բայրաւոր է գիտութիւն գիտական իշխանու-
թեան:

9. Գետիցի տալու իրաւունք ունեն ինչ-

պէս առանձին անհատները, ախպէս էլ ամեն
տեսակ խմբակցութիւններ, միութիւններ և ժո-
ղովներ:

10. Իւրաքանչիւր մէկի անձը և բնակարա-
նը անձեռնմխելի են:

11. Մասնաւոր քնակարաններ մասնաւոր,
խուզարկութիւններ կատարելը, իրեր վերցնելը,
մասնաւոր գրութիւնների բանալի թող են տրո-
ւում միայն օրէնքով ցոյց տրուած գէպերում,
այն էլ միայն դատարանի վճռով: Ամեն մի
ձեռքադրուած անհատ բաղադրուած է և այլ տե-
ղերում, որտեղ կալ դատարանական իշխանու-
թիւն, 24 ժամեայ ընթացքում պէտք է կամ ա-
զատ որձակել, կամ յանձնել դատական իշխա-
նութեան: Ամեն մի ձեռքադրուած, որ տեղի է
ունեցել առանց բտարար հիմունքի կամ տեղի
երկար է տեղի, բան օրէնքով սահմանուած է,
իրաւունք է տալիս առժողին իր վնասների հա-
տուցումը պահանջելու պետութիւնից:

12. Ոչ ոք չէ կարող հարածանքի և պատժի
ենթարկել ալլապէս, բան օրէնքի հիման վրայ
դատական իշխանութեան և օրէնքով սահմանուած
դատարանի միջոցով:

13. Հոյիքից պէտք է լինի պետական
պաշտօնական լիցոն հայրատանի հանրապետ-
ութեան սահմաններում:

Գ.

Դատարան

1. Դատաւարանական իշխանութիւնը անշատ է վարչականից: Դատաւարներն անփութ խելի են և անկախ: Դատաւարութիւնը հրապարակական է: Դատարանի առաջ բոլորը հաւատար են:

2. Նրդեալների դատարանների իրաւասութիւնը սրուում է միմիայն օրէնքով նախատեսուած պատիժների ծանրութեան աստիճանով, անկախ գործի տեսակից, յամենայն դէպս նրանց իրաւասութեան մէջ են մտնում բոլոր պետական ու ասպարական օրէնքի դէմ յանցանքները:

3. Ոչ որ չէ կարող պատժի ենթարկել առանց պատշաճաւոր դատարանի վճռի, որ օրինական սով է ստացել:

4. Փառաւարանական մարմինը կազմակերպում է իսկական ինքնավարութեան սկզբունքով:

5. Արդարադատութեան միւստորը իրաւունք չունի միջամտելու դատաւոր նշանակելու կամ տեղափոխելու գործում կամ դատաստանական գործերի վարման մէջ:

6. Դատաւորները պարզենք չեն ստանում:

Հաշտարար դատաւոր կամ երգեալ ատենակալ ընտրւելու համար չէ պահանջում ստացւած քային ցենդ:

Դ.

Ֆինանսական և սիստակական հարցեր

1. Զարգացում ուղղակի հարկադրութեան ի հաշիւ կողմնակի հարկադրութեան և հեադհետէ վերացումը կողմնակի հարկերի, որոնք դրւած են ժողովրդի համար գործածական իրերի վրայ:

2. Բարեփոխութիւն ուղղակի հարկերի՝ պրոգրեսիւ, եկամտային և ստացւածքային հարկադրութեան հիման վրայ: Մանր վարկի վարկացումն: Պրոգրեսիւ հարկի սահմանում ժառանգութեան վրայ:

3. Առանձին արգիւնարեքութիւնների դրութիւնն ի նկատի ունենալով՝ պակասեցնել մաքսային տուրքերը էժանացնելու համար ժողովրդական գործածութեան յատուկ իրերը եզարգացնելու համար արգիւնարեքութիւնն ու երկրագործութիւնը:

Ե.

Տեղական ինքնավարութիւն

1) Տեղական ինքնավարութիւնը կիրաւուում է Հայաստանում ամենուրեք:

2) Տեղական ինքնավար մարմինների ներկայացուցչութիւնը պէտք է ընտրուի ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի և համամասնական ձայնաւելութեամբ, առանց սեռի, դաստիարակի և պատկանելիութեան խտրութեան:

Մանօր. Ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն նրանք, որոնք որոշ ժամանակ ապրել են աւել քաղաքում կամ շրջանում:

3) Ստորին ինքնավար միութիւնների ժողովները կարող են ընտրել ու կազմել բարձրագոյն ինքնավար միութիւնների ժողովներ:

4) Տեղական ինքնավար մարմինների իրաւասութիւնը տարածուած է տեղական կառավարութեան բոլոր գործերի վրայ, բացառութեամբ իշխանութեան այն ճիւղերի, որոնք պետական կեանքի ներկայ պայմաններում անհրաժեշտ է պահել կենտրոնական իշխանութեան ձեռքում:

Տեղական ինքնավար մարմինների օգալին պէտք է թողնուի պետական բիւջէի մէջ մասնող եկամուտներէց մի մասը:

5) Կենտրոնական իշխանութեան տեղական ներկայացուցիչների գործն է՝ հսկել տեղական ինքնավար մարմինների գործունէութեան օրինականութեան վրայ: Այս ստիժով ծագելիք վեճերի վերջնական լուծումը պատկանում է դատական հիմնարկութիւններին:

դ.

Հոդալին հարց

1. Հոդը և նրա ծայրում եղած հանրային հարստութիւնները կապուած են պետական սեփականութիւն:

2. Հոդը տրւում է միայն այն հողագործին, որը մշակելու է նրան իր և իր ընտանիքի աշխատանքով:

3. Հոդը չը պէտք է լինի վաճառքի և կապալի առարկայ:

4. Հողային անհաւասարութիւնը վերացնելու համար սահմանուած է աշխատաւորական չափ:

5. Աշխատաւորական նորմաների չափը որոշուած է հողային կամիտէների միջոցով ըստ տեղական պայմանների, այսինքն՝ հողի քանակի ու յատկութեան աւել շրջանում: Հողային աշխատաւորական չափը ենթադրուած է փոփոխութեան, եթէ փոխուած են հողային պայմանները:

6. Համաձայն աշխատաւորական չափի երկրագործին կամ գիւղատնտեսական այլ ճիւղով պարագլխին տրւած հողաբաժինը մնում է նրա և նրա ժառանգների ձեռքում՝ այնքան ժամանակ, որքան ժամանակ նրանք մշակում են հողը:

7. Բանադրաւած հոգերից կազմուած և պետական հոգային փոնգ:

8. Պետական հոգային փոնգը աւելացնելու համար ենթարկուած են բանադրու խան՝

ա) Մասնաւոր սեփականատէրերի հոգերը, եթէ նրանք աւելի են աշխատատեղական նոր- մայից:

կ) Բոլոր եկեղեցապատկան, վանքապատկան, վախճափային և այլ կրօնական հաստատութիւններին պատկանող հոգերը:

9. Հոգերի բանադրաւածան զէպքում տրուած է վարձատրութիւն թէ մասնաւոր սեփականատէրերին և թէ հաստատութիւններին:

10. Վարձատրութեան քանակը որոշուած են պետական հոգային շրջանային կոմիտէները: Վարձատրութիւնը ապիս է պետութիւնը կամ միանշաղ, կամ որոշեալ տարիներ ընթացքում, որպէս հոգի միակ սեփականատէր և ոչ թէ գիւղացին կամ հողագործը, որը հանգիստանում է իբրեւ կապալաու պետութիւնից:

11. Բանադրաւածան չին կարող ենթարկուել՝

ա) Տեղական ինքնավարութիւնների, քաղաքների և այլ հաստատութիւնների հոգերը, որոնք անհրաժեշտ են նրանց կուլտուրական, կրթական, բժշկա-սանիտարական կարիքների համար:

կ) Օրինակելի կարածքները, որոնք կրթական և կուլտուրական նշանակութիւն ունենալով անհրաժեշտ են համար, առանց ի նկատի առնելու նրանց տարածութիւնը:

գ) Գործարաններին և այլ արգիւնարեւական հիմնարկութիւններին պատկանող հոգերը, որոնք անհրաժեշտ են նրանց գործունէութեան համար:

դ) Մասնաւոր անձանց և հասարակական — կուլտուրական հիմնարկութիւններին պատկանող այգիները, պարտէզները, քանջարանայիները, ցուցադաշտերը, փորձադաշտերը և գիւղատնտեսական բուժարանները:

է.

Բանադրուած հոգ

1. Ապատութիւն բանադրական միութիւնների և ժողովների:

2. Գործադուլի իրաւունք:

Գործադուլի ժամանակ կամ նրա տարածում կատարած օրինադանցութիւնները պատժուած են օրէնքով սովորական հիմունքներով:

3. Բանադրական օրէնագրութիւնը ասորածել վարձու աշխատանքի բոլոր տեսակների

վրայ: Սահմանել աշխատանքի տեսչություն, բանւորների ներկայացուցիչների մասնակցութեամբ, աշխատանքների շահերը պաշտպանող օրէնսդրութեան իրազօրծման վրայ հսկելու համար:

4. Ութ ժամեայ բանւորական օր սահմանել օրէնսդրական կարգով: Այդ նորմայի անմիջական ներմուծումը ամեն տեղ, ուր հնարաւոր է ներկայումս և նրա հետզհետեւ ներմուծումը միւս արդիւնաւործությունների մէջ:

5. Արգելել գիշերային և նորմայից զուրս աշխատանքները՝ բացի այն դէպքերից, երբ այդպիսի աշխատանքները անհրաժեշտ են տեխնիկայէս կամ ընդհանուր հասարակական տնտեսկեցից:

6. Կանոնաց և անհավատանքների աշխատանքի պաշտպանութեան միջոցները ընդարձակել:

7. Սահմանել հաշտարար տոտաններ՝ բողկացած աշխատանքի և կողխապի կողմից հատար թւով ներկայացուցիչներից՝ վեճերը լինելու և վճելու համար:

8. Պետութեան միջոցով պարտադիր ապահովագրութիւն մտցնել հիւանդութիւնների, զրմբազդ գէպքերի և պրոֆեսիանալ հիւանդութիւնների դէմ՝ ձեռնարկողների հաշուով:

9. Պետական ապահովագրութիւն ձեռնարկ

թեան և աշխատանքի անկարողութեան դէմ՝ բոլոր անձնական աշխատանքով ապրողների համար:

Ը

ժողովրդական քառասունութիւն

1. Ժողովրդական լուսաւորութիւնը պէտք է կազմակերպել ազատութեան, հասարակացման և ապակենդրոնացման սկզբունքով:

2. Ազատութիւն մասնաւոր և հասարակական նախաձեռնութեան՝ բանալու և կազմակերպելու ամեն տեսակի ուսումնալալներ ինչպէս նաև արտաքոյ զարոցական կրթութեան համար:

3. Ազատութիւն լեզւի և դասաւանդութեան:

4. Կառիտար ինքնավարութիւն և դաստաւանդութեան ազատութիւն համարաբաններում և միւս բարձրագոյն զարոցներում:

5. Ընդհանուր, ձրի և պարտադիր ուսուցումն նախնական դպրոցներում:

6. Անձնական ուսուցման դործը պէտք է լինծուի տն ահա ինքնավարութիւններին:

7. Ամէլ մէ վայրի ընակչութիւն պէտք է իրաւունք ունենայ կրթութիւն ստանալու իր մայրենի լեզուով ուսման բոլոր աստիճաններում:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

I

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԸ

1) Հայ ժողովրդական կուսակցութիւնը գործում է Հայաստանում և նրա սահմաններից դուրս բոլոր հայաբնակ վայրերում.

2) Հայ ժողովրդական կուսակցութիւնն ունի իւր ծրագիրը և կանոնադրութիւնը՝ հաստատուած կուսակցութեան բ. համագումարի կողմից:

II

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ ԵՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

1) Հայ ժողովրդական կուսակցութեան մէջ կարող են մտնել այն յոգիւր հայերը, առանց սեւի, դասանքի և դասակարգի խտրութեան, որոնք ընդունում են կուսակցութեան ծրագիրն ու կանոնադրութիւնը և համաձայն են ենթարկել կուսակցութեան կարգապահութեան:

Մակօրոյքիւն. Հայաստանի սահմաններում Հայ ժողովրդական կուսակցութեան մէջ կարող են մտնել նաև Հայաստանի այլազգի քաղաքացիները:

2. Կուսակցութեան անդամներ ընդունում են թէ կենտրոնական և թէ տեղական կոմիտէները, ինչպէս նաև նրանց կողմից ուղարկուած լրագործները այնպիսի վայրերում, ուր գիտես չեն կազմակերպուած կոմիտէներ:

3. Կազմաւորութիւնը կառարում է համապատասխան կոմիտէն՝ եղած գիմումի հիման վրայ զապտնի քւէարկութեամբ, նախօրօք խորհրդակցելով թեկնածուի ընդունելիութեան մասին:

Մակօրոյքիւն. Կոմիտէները պարտաւոր են այն հին անդամներին, որոնք անդամակցական վճարը դեռ չեն մտցրել, ընդունել նոր կարգով:

4. Կուսակցութեան կարգապահութիւնը պարտաւոր է կուսակցութեան բոլոր անդամների համար:

5. Կուսակցական անդամների միջև առաջացած կուսակցական վէճերը քննելու են ընկերական կամ միջնորդ գատարանի միջոցով:

6. Կուսակցութեան այն անդամները, որոնք ուղղակի կամ կողմնակի կերպով գործում են ի վնաս կուսակցութեան շահերի՝ հեռացուած են նրա կազմից: Հեռացումը կատարում է այն կոմիտէն, որի գործում մէկութեան շրջանի մէջ է գտնուած հեռացողը:

Մակօրոյքիւն. Հեռացողը իրաւունք ունի հարցի վերջնական լուծումը ներկայացնել կենտրոնական կոմիտէի քննութեան և վերջնական որոշման:

7. Կուսակցական անդամները պարտաւոր են պարբերաբար տալ անդամակցական վճարներ, որոնց քանակը որոշում են պանագան վայրերի կենտրոնական կոմիտէները:

1-238490



III

ՏԵՂԱԿԱՆ ՃԻԻՂԵՐ

1. Ամեն մի ընտելավայրում (քաղաք, գիւղ, հայրն), որտեղ կը լինեն 10-ից ոչ պակաս՝ կուսակցութեան յարողներ—կազմակերպուած է տեղական ճիւղ:

2. Տեղական ճիւղերը ունեն իրենց ընդհանուր ժողովները և տեղական կոմիտէները: Տեղական կոմիտէները, բաղկացած երեք անդամից գիւղերում և հինգ անդամից քաղաքներում, ընտրուած են տեղական ընդհանուր ժողովի կողմից մի տարի ժամանակով:

Մանօրոքիւն. ա) տեղական կոմիտէները ժամանակից առաջ կարող են լուծել տեղական ճիւղերի ընդհանուր ժողովի առաջ արկածեալ և կենտրոնական կոմիտէի որոշումը:

բ) թոյլատրուած է կոսպտացիայի քաղաքում հրաւիրել իրենց կազմի մէջ գիւղական կոմիտէներին՝ մէկ անգամ, քաղաքային կոմիտէներին՝ երկու անգամ:

3. Տեղական կոմիտէները ունեն իրենց նախագահութիւնը՝ մի նախագահ, մի քարտուղար ու մի գանձապահ:

4. Տեղական կոմիտէները վարում են կուսակցութեան գործերը իւրաքանչիւրը իւր վայրի սահմաններում, առաջնորդելով թէ այն կանոնադրութեամբ և թէ այն հրահանգով, որոնք սահմանուած են կուսակցութեան ընդհանուր համագումարների և նրա կենտրոնական կոմիտէների կողմից:

Իւրանչիւր տարւայ՝ վերջը տեղական ճիւղերը

կազմում են ստաջիկայ տարւայ իրենց ծախսերի նախահաշիւը, որը հոկտեմբերից ոչ ուշ ներկայացնում են ի հաստատութիւն իրանց շրջանային կոմիտէին: Շրջանային կոմիտէները ճիւղերի հաստատուած նախահաշիւները ուղարկում են կենտրոնական կոմիտէի հաստատման:

6. Տեղական ճիւղերից ստացւած եկամուտներից $\frac{1}{8}$ մասը յատկացւում է կենտրոնական կոմիտէի ծախսերի համար, իսկ մնացեալ $\frac{7}{8}$ -ը պահուած է ամեն մի ճիւղի գանձարանում-ճիւղի ծախսերը հոգալու:

7. Տեղական ճիւղերը ամիսը 1-2 անգամ պարտաւոր են տեղեկացնել կենտրոնական կոմիտէներին իրենց գործունէութեան մասին:

IV

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԻԻՂԵՐԸ

1. Իւրաքանչիւրի շրջանի տեղական ճիւղի բոլոր միանալով կազմում են շրջանային ճիւղ:

2. Շրջանային ճիւղերի օրգաններն են՝ շրջանային համագումարներ և շրջանային կոմիտէներ:

3. Շրջանային համագումարները հրաւիրուած են ոչ պակաս, քան տարին մի անգամ: Պատգամաւորների ներկայացուցչութիւնը շրջանային համագումարներում սահմանուած է հետեւեալ կերպով. իւրաքանչիւր տեղական ճիւղի կոմիտէն առկա է մի պատգամաւոր, բացի դրանից՝ մինչև 50 անգամ ունեցող ճիւղը կա մի պատգամաւոր, իսկ ափսոսեալ իւրաքանչիւր 100 անձից մէկը:

4. Շրջանային համագումարը վճռում է շրջանին վերաբերեալ հարցերը, ստաշնորդելով ընդհանուր համագումարի և կենտրոնական կոմիտէի աւած հրահանգներով և նրանց սահմանած կանոններով և իւր կողմից տալիս է հրահանգներ իւր շրջանի տեղական ճիւղերի կոմիտէների գործունէութեան մասին:

5. Շրջանային համագումարը ընտրում է մի տարի ժամանակով շրջանային կոմիտէ, բաղկացած եօթ անդամից, որոնք իրենց միջից ընտրում են մի նախագահ, մի փոխ նախագահ, մի քարտուղար և մի գանձապահ:

Մանօրութիւն. Այն շրջաններում, ուր տեղական ճիւղերը շրջանային համագումար չեն ունեցել և չեն ընտրել շրջանային կոմիտէներ, այնտեղ շրջանի գլխաւոր քաղաքի քաղաքային կոմիտէները ժամանակաւորապէս կատարելու են շրջանային կոմիտէների գործերը:

6. Շրջանային կոմիտէները վարում են անմիջապէս շրջանի գործերը և զեկաւարում են տեղական ճիւղերի գործունէութիւնը:

Կ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ

1. Կենտրոնական կոմիտէներ ընտրւում են Հայաստանում և այլ երկրներում: Իւրաքանչիւր կենտրոնական կոմիտէ վարում է աւտոնում հիմունքներով իր երկրի բոլոր կուսակցական քաղաքական գործերը:

Կենտրոնական կոմիտէների վայր լինելու են մայրաքաղաքները:

2. Կենտրոնական կոմիտէները, բաղկացած 12 անդամից, ընտրւում են երկրների կուսակցական ճիւղերի համագումարից մի տարի ժամանակով, գաղտնի բւէարկութեամբ:

Մանօրութիւն, ա) Եթէ մի տարուց յետոյ համագումար չի կայանում, նոյն կոմիտէն շարունակում է գործել մինչև առաջիկայ համագումարը: Բ) Թոյլատրւում է կօօպացիայի իրաւունքի հիման վրայ կենտրոնական կոմիտէի կազմի մէջ հրաւիրել նաև երեք նոր անդամ:

3. Կենտրոնական կոմիտէների ներքին կազմակերպումը այն խնդիրներում, որոնք նախատեսուած չեն սոյն կանոնադրութեամբ կատարւում է նոյն կոմիտէների կողմից:

4. Կենտրոնական կոմիտէները իրենց կազմից ընտրում են մի նախագահ, երկու փոխ-նախագահ, մի քարտուղար և մի գանձապահ:

5. Կենտրոնական կոմիտէները պարտաւարում են սերա կապ պահպանել տեղական կոմիտէների հետ պարբերաբար (ամիսը 1-3 անգամ) տեղեկութիւն տալով նրանց քաղաքական անցուղարձի և կուսակցական ընդհանուր գործունէութեան մասին, տալով հարկաւոր ղեկըրում համապատասխան անհրաժեշտ հրահանգներ:

6. Կենտրոնական կոմիտէները իրանց միջից կազմում են մասնաժողովները, գանապան հարցեր ուսումնասիրելու կամ այլ յանձնարարութիւնների համար: Այլ մասնաժողովների անգամները պարտաւոր են կենտրոնական կոմիտէի նիստերին պարբերաբար

գեկուցանել մասնավորների աշխատանքների մասին:

7. Մի որևէ երկրի կենտրոնական կոմիտեի անգամ, զանազան մի այլ երկրում, մասնակցում է այդ երկրի կենտրոնական կամ տեղական կոմիտեի նիստերին՝ վճարական ձայնի իրաւունքով:

8. Տեղական և շրջանային կոմիտեները անգամները, զանազան իրանց կենտրոնական կոմիտեի վայրում, կարող են մասնակցել նրա նիստերին խորհրդակցական ձայնի իրաւունքով, իսկ երբ նրանք դալիս են տեղական կամ շրջանային կոմիտեների յանձնարարութեամբ՝ կուսակցութեան վերաբերեալ գործերով, այդ խնդիրների քննութեան մասնակց կենտրոնական կոմիտեի նիստերին նրանք ևս մասնակցում են վճարական ձայնի իրաւունքով:

9. Երկրային կենտրոնական կոմիտեները հրապարակում են երկրային ճիւղերի համադրւածք ոչ պակաս, քան տարին մի անգամ, սրբ վճարում է երկրին վերաբերեալ կուսակցութեան գործունէութեան հարցերը, ընտրում է կենտրոնական կոմիտե և հաստատում է կենտրոնական կոմիտեի նախահաշիւը:

VI

ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Կուսակցութեան գերագոյն խորհրդի կազմի մէջ են մտնում երեք հոգի ընտրւած բնիկներու համագումարից, երեք անգամ Հայաստանի և 2-ական անգամ

էլ Վրաստանի և Ադրբեյջանի կենտրոնական կոմիտեների կողմից:

Մանօրութիւն. Կենտրոնական կոմիտեները կարող են ընտրել խորհրդի անդամներ թէ՛ իրենց կազմից և թէ՛ կուսակցութեան այլ անդամներից:

2. Գերագոյն խորհուրդը իրաւասու է՝

ա) Լուծել համադրւային և ընդհանուր կուսակցական բնոյթ ունեցող հարցերը:

բ) Պարզաբանել կուսակցութեան ծրագրային և կազմակերպչական հարցերը:

գ) Ընդհանուր վերին հսկողութիւն ունենալ բոլոր կենտրոնական կոմիտեների գործունէութեան վրայ:

դ. Լուծել կենտրոնական կոմիտեների միջև ծագած տարաձայնութիւնները և վէճերը, իսկ նրանցից մէկի կողմից բողոք յարուցւելու դէպքում Գերագոյն Խորհուրդը այդ տարաձայնութիւնները ներկայացնելու է ընդհանուր համագումարին:

3. Գերագոյն Խորհուրդը իր գործունէութեան համար պատասխանատու է միայն ընդհանուր համագումարի առաջ:

4. Գերագոյն Խորհրդի մշտական վայրն է հանդիսանում Հայաստանի մայրաքաղաքը:

5. Գերագոյն Խորհրդի այն անդամները, որոնք զտնուում են Հայաստանի մայրաքաղաքում, կազմում են նրա գործադիր մարմինը:

VII

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԱԳ

1. Կուսակցութեան ընդհանուրը հրապարակում են Գերագոյն Խոր

ՀՀ Ազգային գրադարան



NL0863925

պահուս, քան տարին մի անգամ.
 քառ հաշկցողութեան Գերազոյն Մարհրդի հրաւիրու-
 մն նաեւ արտակարգ համազումարներ: Հերթական հա-
 մազումարներէ տեղը որոշում է պմեն անգամ ինքը
 համազումարը, իսկ արտակարգ համազումարներէնը՝
 Գերազոյն Մարհրդը:

2. Ընդհանուր համազումարը բաղկանում է Գե-
 րազոյն Մարհրդի, Հայաստանի և այլ կողմների կեն-
 տրոնական կոմիտէների անդամներից, կառավարութեան
 և պարլամենտի կուսակցական անդամներից, շէր-
 ջանային և տեղական միւլերի (կոմիտէների և
 ընդհանուր ժողովների) ներկայացուցիչներից, ինչ-
 պէս նաեւ կուսակցական այն անդամներից և այն
 անձերից, որոնք հրաւիրում են Գերազոյն Մար-
 հրդի և համազումարի աշխատանքներին մասնակ-
 ցելու: Այդ կողմերէ հրաւիրւած անձերի թիւը չը
 պէտք է լինի աւելի, քան համազումարի նիստադրւած
 կողմի մէկ-տասներորդ մասը:

3. Ընդհանուր համազումարները մնում են այն
 հարցերը, որոնք վերաբերում են կուսակցութեան ծը-
 րագրի փոփոխման և կուսակցութեան կազմակերպու-
 թեան, որոշում են կուսակցութեան տակտիկան, կու-
 տարում են Գերազոյն Մարհրդի երեք անգամի ըն-
 տրութիւնը, հաստատում են Գերազոյն Մարհրդի նա-
 խաճառիչը, որանմանում են կանոններ և հրահանգներ
 կուսակցութեան մարմինների և օրգանների համար,
 որոշումներ են տալիս ամեն տեսակ խնդիրներին, ո-
 ռոնք վերաբերում են կուսակցութեան ընդհանուր
 գործունէութեանը: